

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԵԼԵՔՅԱՆ

Կյանքի 75-րդ տարում վախճանվեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անվանի գրականագետ և լրագրող Հարություն Ֆելեքյանը:

Ծնվել է Երևանում 1931 թ. մարտի 13-ին: 1948 թ. ոսկե մեդալով ավարտելով Երևանի Սո. Լիսիցյանի անվան միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1953 թ. գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ ուսումնառությունը շարունակել է ասպիրանտուրայում:

1958 թ. Հ. Ֆելեքյանը պաշտպանել է քեկնածուական առեմախոսություն, իսկ 1970-ին՝ դոկտորական: 1971 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Բազմաբնույթ ու հետաքրքիր է Հ. Ֆելեքյանի աշխատանքային գործունեությունը. 1957 թվականից խմբագրական աշխատանքներ է կատարել «Սովետական գրականություն» ամսագրում, «Սովետական Հայաստան» օրաթերթում, եղել է «Գրական թերթի» քննադատության բաժնի վարիչ, «Պատմա-բանասիրական» հանդեսի բաժնի վարիչ, իսկ 1965-ից ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հայ մամուլի պատմության ավագ գիտական աշխատակից է: 1970 թ. Հ. Ֆելեքյանը աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում որպես ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ և դեկավարում այն մինչև 1981 թ.: Այդ տարվանից մինչև 1991 թ. նա դեկավարում է «Սովետական գրող» («Նաիրի») հրատարակչությունը՝ մեծապես նպաստելով ժամանակակից գրականության զարգացմանը: 1991-2001 թթ. պաշտոնավարել է իբրև ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային



գործերի վարչության պետ, այնուհետև՝ վարչության պետի խորհրդական:

Հ. Ֆելեքյանը 1958 թվականից Հայաստանի ժուռնալիստների միության, իսկ 1963 թվականից Հայաստանի գրողների միության անդամ էր: Հաշվի առնելով հայ ժուռնալիստիկային մատուցած անուրանալի ծառայությունները՝ Հ. Ֆելեքյանին 1981 թ. շնորհվել է «Հայաստանի վաստակավոր ժուռնալիստ» պատվավոր կոչում: Մեծ է Հ. Ֆելեքյանի վաստակը նաև հայ պարբերական մամուլի պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում: Նրա գրչին են պատկանում մի քանի մենագրություն և բազմաթիվ հոդվածներ, որոնցից շատերը ունեն գիտական կարևոր նշանակություն, իսկ «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում» (1970 թ.) մենագրությունը իր տեսակի մեջ եզակի երևույթ է, որ անկողմնակալ գիտական քննությամբ լուսաբանում է պարբերական մամուլի մի կարևոր շրջանի պատմությունը՝ իր լույսով ու սովորով:

Հ. Ֆելեքյանը կազմել է հայ գրողներից շատերի երկերի ժողովածուներ, զբաղվել առանձին գրողների ստեղծագործությունների հմտալից ուսումնասիրությամբ, հայ գրականությունը հարստացրել ռուսերենից կատարած բարձրորակ թարգմանություններով: Այդ տեսակետից հիշատակելի է հատկապես Ալ. Գերցենի «Եղելություններ և խոհեր» գլուխգործոցի առաջին հատորի թարգմանությունը:

Հ. Ֆելեքյանը անուրանալի ներդրում ունի «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի կայացման գործում. հիմնադրման օրվանից սկսած՝ ուղիղ քսան տարինա աշխատակցել է «Բանբեր»-ին՝ նախ որպես պատասխանատու քարտուղար (1967-1970 թթ.), այնուհետև գլխավոր խմբագրի տեղակալ (1970-1978 թթ.), իսկ ապա գլխավոր խմբագիր (1978-1986 թթ.): Անցնելով այլ աշխատանքի՝ պրոֆ. Հ. Ֆելեքյանը չէր խզել կապերը «Բանբերի»

հետ, այլ ուշի ուշով հետևում էր նրա գործունեությանը և հմուտ լրագրողի ու վաստակաշատ գիտնականի իր խորհուրդներով օգնում խմբագրության աշխատակիցներին՝ հանդեսի գիտական մակարդակը բարձր պահելու համար: «Բանբերի» էջերում Հ. Ֆելեքյանի տպագիր վերջին խոսքը եղավ 100-րդ համարի առթիվ խմբագրական խորհրդի խնդրանքով գրած համառոտ, բայց անչափ հետաքրքիր առաջաբանը:

Որտեղ էլ աշխատել է Հ. Ֆելեքյանը, իր մարդկային բարձր առաքինությունների, կենսախիճն քնավորության և մարդու հանդեպ պահանջկոտ, բայց և զգայուն վերաբերմունքի համար վայելել է շրջապատի սերն ու հարգանքը, որը, վստահ ենք, ընդմիջտ կպահպանվի նրա հազարավոր սաների, ընկերների, բարեկամների և ընդհանրապես բոլոր ճանաչողների հիշողության մեջ:

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»  
• ՀԱՆԳԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**